

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ Պարսկա-Հնդկաստանի Առաջնորդական Խորհրդարանի անունով, որով ծանուցանեց ի գիտութիւն, թէ Տ. Սահակ Արքեպիսկոպոս Այվազեան, իւր խնդրի համաձայն, Նորին Վեհափառութեան թ. 726 կոնդակով արձակուած է Պարսկա-Հնդկաստանի թեմական առաջնորդի պաշտօնից։ Յուլիս 28. թ. 725.

Դիւանի գրութիւն Ղարաբաղի Թեմական Դպրանոցի Հոգաբարձութեան նախագահ Տ. Զաւէն վարդապետի անունով, որով ուղարկելով Մեծ. պ. Բաղդասար Արղումանեանի Թեմական Դպրանոցին նուիրաբերելիք 200000 ռուբ. խնդիրն ու պայմանները և յանձնարարուեց խորհրդակցել այդ մասին Թեմական դպրանոցի Հոգաբարձութեան հետ և արդիւնքի մասին զեկուցում տալ Նորին Վեհափառութեանը 5 օգոստոս. թ. 746.

Դիւանի գրութիւն Ատրպատականի Առաջնորդի անու-

նով, որով յանձնարարուեց շուտով զեկուցանել Նորին Սրբութեան Սէյդավար գիւղացիների կրօնափոխութեան խնդրի մասին. 5 օգոստոսի թ. 752.

Դիւանի գրութիւն Տարօնի Առաջնորդի, Վանայ Երամեան վարժարանի հիմնադիր—տնօրէն Հ. Երամեանի և Համազասպ Եղիսէեանի անունով, որով գոհունակութիւն յայտնուեց Վեհափառ Հայրապետի ս. օծումը շնորհաւորելու համար. 5 օգոստոսի թ. թ. 753, 754 և 755.

Ն. Վ. Մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինօդին տալ Մայր Աթոռի գանձարանից Մայր Աթոռի միաբան Տ. Մեսրոպ վարդապետ Մաքսուդեանի արտասահմանեան անցագրի չորս տարուայ տուրքը—մի հարիւր քսան ռուբլի. 13 օգոստոսի թ. 782.

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի միաբան Տ. Բենիկ վարդապետի անունով, որով թոյլատրուեց նորան համաձայն իւր խնդրագրի, մի տարի ևս շարունակել կրօնուսոյցի պաշտօն Թիֆլիզի Դ-րդ արական գիմնազիայում. 17 օգոստոսի թ. 787.

Դիւանի գրութիւն երդուեալ հաւատարմատար պ. Սամսոն Յարութիւնեանի անունով, որով յանձնարարուեց պարբերաբար զեկուցում տալ Նորին Սրբութեան Ա. Ղուկասեանի կտակի գործի դատավարութեան ընթացքի մասին. 17 օգոստոսի թ. 788.

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինօդին կարգադրել ուղարկել Գեղամ վարդապետ Բաբաջանեանին Խորվիրապի վանքը, որպէս միաբան. 17 օգոստոսի թ. 792.

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան ուղարկել, Վրաստանի Կոնսիստորիայի միջոցով, Եղնիկ քահ. Ալխազեանին՝ տպարանի գրապահեստում՝ գտնուած գրքերից մի-մի օրինակ Մետեխի բանդի գրադարանին յանձնելու համար. 17 օգոստոսի թ. 803.

Դիւանի գրութիւն Վրաստանի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Եփրեմ Եպիսկոպոսի անունով, որով վերադարձուեց և թոյլատրուեց տպագրել դպիր Սարգիս Քամալեանի կազմած «Մարգարէներ և հրէից ազգի վիճակը մինչև Հերովդէս» դասագիրքը։ 17 օգոստոսի թ. 822։

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինօդին կարգադրել տալ Մայր Աթոռի միաբան Տ. Ներսէս վարդապետ Տէր-Միքայէլեանին միաբանական ռոճիկ և ննդադրամ տարեւոյս մայիսի 1-ից։ 17 օգոստոսի թ. 836։

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի փաստաբան պ. Ա. Պարոնեանի անունով, որով յանձնարարուեց գնալ Ղարս և ստանալ հանգուցեալ բժշկապետ Աղէքսանդր Տէր Յարութիւնեանի կտակած հասանելի գոյքը։ 17 օգոստոսի թ. 844։

Դիւանի գրութիւն Վրաստանի թեմի ժամանակաւոր կառավարչի անունով, որով յանձնարարուեց ստանալ և ուղարկել Յովհաննեան օրիորդաց դպրոցի պատուաւոր Հոգաբարձու պ. Անանեանի կարծիքը՝ նոյն դպրոցի թոշակարկղի մասին։

Դիւանի գրութեամբ ծանուցուեց Ատրպատականի Հայոց թեմական խորհրդին, որ տառերի գիւտի 1500-ամեայ և Հայ տպագրութեան 400-ամեայ յոբելեանի ծրագիրը կուղարկուի սեպտեմբերի սկզբին։ 20 օգոս. թ. 856։

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինօդին առանց բացառութեան պահանջել բոլոր քահանայացուներից հայկական ձայնագրութեան վկայական։ 20 օգոստոսի թ. 873։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինօդի անունով, որով պատուիրուեց առաջադրել Ռուսահայոց թեմական Առաջնորդներին Կարմիր Խաչի ընկերութեան խնամքի տակ եղած բորոտների օգտին գանձանակագրամ ժողովել և ուղարկել Սինօդ ըստ պատկանելոյն հասցնելու համար։ 21 օգոստոսի թ. 879։

Շրջաբերական կոնդակներ Ռուսահայոց Թեմական Առաջնորդների անունով, որոնցով պատուիրուեց ներկայացնել իրենց թեմերում գտնուած վանքերի 1910 և 1911 թ. մտից և ելից դրամական մատեանները համառօտ հաշուեցուցակի հետ, և այսուհետև այդ վանքերի մատեանները ներկայացնել իւրաքանչիւր տարուայ վերջը։ 22 օգոստոսի թ. 897—902։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինօդի անունով, որով պատուիրուեց աւելացնել Մայր Աթոռի միաբան Տ. Եսայի վարդապետի ռոճիկի վրայ 5 ռուբլի։ 22 օգոստոսի թ. 903։

Կոնդակ Վանական Կառավարութեան նախագահ Տ. Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանի անունով, որով կարգուեց ժամանակաւոր կարգադրիչ Ատրպատականի Հայոց թեմի գործերի մինչև Առաջնորդի ընտրութիւնը։ 28 օգոստոսի թ. 908։

Կոնդակ Տ. Կարապետ Եպիսկոպոսի անունով, որով արձակուեց Ատրպատականի Առաջնորդի պաշտօնից, իւր խնդրի համաձայն, և պատուիրուեց առաջնորդական բոլոր գործերը կանոնաւորութեամբ յանձնել Տ. Ներսէս վարդապետին։ 28 օգոստոսի թ. 909։

Գրութեամբ խնդրուեց Երևանի Նահանգապետին տալ Տ. Ներսէս վարդապետին վեց ամսեայ արտասահմանեան անցագիր Պարսկաստան գնալու համար։ 28 օգոստոսի թ. 912։

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի Լուսարարապետին տալ Ներսէս քահ. Տէր Մինասեանին՝ Տաթևի շրջանի համար ս. Միւռոն։ 28 օգոստոսի թ. 913։

Գրութեամբ ծանուցուեց Կ. Պօլսի Պատրիարքին, թէ կարգադրուած է ուղարկել 400 ռ. Տաճկաստանից ձեմարանի համար եկող աշակերտների ճանապարհածախսի համար։ 29 օգոստոսի թ. 914։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Թիֆլիզի Հայոց Ազգագրական Ընկերութեան ներկայացուցիչ Նորին Սրբութեան նախագծուած շինութեան մակարդակն ու նախահաշիւը։ 29 օգոստոսի թ. 915։

Գրութիւն Ատրպատականի Նահանգապետի անունով, որով խնդրուեց աջակցութիւն ցոյց տալ Տ. Ներսէս վարդապետին Ատրպատականի թեմի գործերը կարգաւորելու ժամանակ։ 29 օգոստոսի թ. 916։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Պարսկա-Հնդկաստանի Առաջնորդական Խորհրդարանին կառավարել թեմի գործերը մինչև առաջնորդի ընտրութիւնը։ 29 օգոստոսի թ. 922։

Կոնդակ Ատրպատականի թեմական Խորհրդի անունով, որով յանձնարարուեց Ներսէս վարդապետին պատշաճ ընդունելութիւն ցոյց տալ, հոգալ նորա մնունդն ու ճանապարհածախքը թեմական դանձարանից։ 30 օգոստոսի թ. 924։

Կոնդակով պատուիրուեց ս. Էջմիածնի Սինոդին ընդունել Քանաքեռցի գիւղատնտես Թադէոս Ղազարեանին Մայր Աթոռի միաբանութեան շարքը։ 31 օգոստոսի թ. 929։

Դիւանի գրութեամբ Պարսկա-Հնդկաստանի Հայոց առաջնորդական խորհրդարանի անունով, որով յայտնուեց, որ շուտով կկատարուի առաջնորդի ընտրութիւնը թեմի պատգամաւորների ձեռքով։ 1 սեպտ. թ. 937։

Ն. Վ. մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինոդին առաջադրել Երևանի կոնսիստորիային, որ Տաթևի հոգևոր կառավարութիւնը ժամանակին և կանոնաւորութեամբ ուղարկի Տ. Նիկողայոս վարդապետ Տէր Աւետիքեանին հասանելի ամսավճարը Ղարաբաղի կոնսիստորիայի միջոցով։ 1 սեպտեմբ. թ. 939։

Ն. Վ. մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի ս. Սինոդին շուտով կանոնաւորել Ատրպատականի և Բեսսարաբիայի թեմերի յարաբերութիւնը։ 2 սեպտեմբ. թ. 951։

Կոնդակ ս. Էջմիածնի Մինոդի անունով, որով առաջադրուեց սեպտեմբերի 1-ից ճեմարանի Տեսուչ և Հայրապետական դիւանի Դիւանապետ Տ. Բագրատ վարդապետի ռոճկի վրայ աւելացնել ամսական 20 ռ., որով կլինի ամսական 100 ռ.։ 2 սեպտեմբ. թ. 952։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Շամախու թեմական առաջնորդին, որ Դերբենդի Հայոց ծխական դպրոցում կար ու ձեի առանձին դասընթացք բանալու համար՝ նախ հարկաւոր է ստանալ նահանգապետի թոյլտուութիւնը քանի որ աշակերտուհիների համար չէ միայն։ 3 սեպտեմբերի թ. 956։

Կոնդակ ս. Էջմիածնի Մինոդի անունով, որով կարգուեցան, Մինոդի անդամ Տ. Մատթէոս վարդապետը, Մ. Աթոռի հիւրընկալ Տ. Սիսն վարդապետը և Տ. Ռուբէն աբեղան, ճեմարանի Տեսուչ Տ. Բագրատ վարդապետի խորհրդակցութեամբ, առաջիկայ Միւռոնօրհնութեան ժամանակ եկող հիւրերի և ուխտաւորների ընդունող Կարգադիր Յանձնաժողովի անդամներ։ 3 սեպտեմբ. թ. 966։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ռուսահայոց թեմական առաջնորդներին, որ ս. Միւռոնօրհնութեան հանդիսին ս. Էջմիածնում ներկայ լինեն, որպէս զի անձամբ զեկուցանեն և ներկայացնեն նորին Ս. Օծութեան իրենց թեմերի մանրամասն տեղեկագիրը։ 4 սեպտեմբերի թ. թ. 976—981։

Նոյն իմաստով գրուեց նաև Սևանի վանահայր Տ. Սարգիս եպիսկոպոսին վանքի մասին մանրամասն տեղեկագիր ներկայացնելու համար։ թ. 982։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Կ. Պոլսի Պատրիարքին 3 հատ վարդապետական ականակուռ լանջախաչեր։ 6 սեպտեմբ. թ. 990։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Երևանի, Ղարաբաղի, Նոր Նախիջևանի թեմական դպրանոցների և Ներսիսեան դպրանոցի Հոգաբարձութեան նախագահնե-

րին, որ հոգաբարձական ժողովներում մի–մի կարող անձն ընտրեն և դպրանոցի տեսչի հետ ուղարկեն ս. Էջմիածին՝ մասնակցելու հոկտեմբերի 10, 11 և 12-ին կայանալիք ժողովներին՝ թեմական դպրանոցների ծրագրի միաձևութեան և կանոնաւորման խնդրի մասին։ 7 սեպտեմբ. թ. թ. 992—995։

Կոնդակով առաջադրուեց ս. Էջմիածնի Սինոդին հեռագրով փոխադրել Թաւրիզ Տ. Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանին 200 ռ.։ 8 սեպտ. թ. 1011։

Կոնդակ յանուն Ռումանիայի Հոգևոր հովիւ Տ. Գնէլ ծ. վարդապետ Գալէմքարեանին, որին Նորին Վեհափառութիւնը յորդորելով վառ պահել այնտեղի տարագիր հայ հօտի մէջ ազգային ոգին, եկեղեցասիրութիւնն ու ջերմեռանդութիւնը։ 8 սեպտ. թ. 1014։

Գրութեամբ խնդրուեց Կովկասի Տ. Փոխարքային Հայ տպագրութեան 400-ամեայ յոբելեանի առթիւ Կովկասահայերի մէջ ծխական դպրոցների ապահովութեան համար հանգանակութիւն կատարել միամեայ ժամանակով կազմելու «Դպրոցական ֆոնդ»։ 10 սեպտեմբ. թ. 1017։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ռուսահայոց թեմական առաջնորդներին, որպէս զի յայտնեն իրենց թեմում գտնուած ուսուցիչ–ուսուցչուհիներին, որ ներկայացնեն իրենց ուսման և այլ վկայականների վաւերական պատճէնները՝ ընդհանուր ցանկ կազմելու համար։ 11 սեպտ. թ. թ. 1022—1026։

Ն. Վ. մակագրութեամբ Բեսսարաբիայի առաջնորդի անունով թոյլ տրուեց պ. Գէորգ Կարամուրզայեանին նորոգել իւր ծախքով ս. Աստուածածնայ ուխտատեղին, եթէ օրինական արգելք չկայ։ 12 սեպտեմբ. թ. 1028։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Բեսսարաբիայի թեմի առաջնորդին, որ Նոր–Նախիջևանի թեմական դպրանոցի հրահանգը կքննուի հոկտեմբերի 10, 11 և 12-ին կայանալիք ժողովներում։ 12 սեպտեմբ. թ. 1033։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Երեւանի, Ղարաբաղի և Ներսիսեան դպրանոցների հոգաբարձութեան նախագահներին անմիջապէս ներկայացնել Նորին Սրբութեան դպրանոցների կանոնադրութիւնները։ 12 սեպտ. թ. թ. 1034—1036։

Ն. Վ. մակագրութեամբ պատուիրուեց Մայր Աթոռի Գ. Հոգևոր ճեմարանի վարչութեան բացառաբար ընդունել գիշերօթիկ Ախալցխայի Հոգաբարձութեան ուղարկած երկու սաներին և պատրաստել համապատասխան դասարանի համար, յանձնարարելով հոգաբարձութեան, որ այսուհետև պատրաստուած աշակերտներ ուղարկի։ Պատուիրուեց նոյնպէս բացառաբար ընդունել Ն. Նախիջևանի եկեղեցական Աղքատախնամ Հոգաբարձութեան ուղարկած սան Աղէքսանդր Մելիք-Բաղաջանեանին և պատրաստել։ 12 սեպտ. թ. թ. 1038, 1039։

Մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինոդին՝ ի նկատի ունենալով Խոյի գաւառի Սէյդավար գիւղի անմխիթար ու թշուառ վիճակը, տալ Մ. Աթոռի գանձարանից Սէյդավարի ուսուցիչ ճեմարանաւարտ Սարգիս Յարութիւնեանին 350 ռ. տարեկան ռոճիկ, 30 ռ. ճանապարհածախս և 200 ռ. դպրոցի շէնքը աւարտելու համար նպաստ։ 14 սեպտեմբ. թ. 1046։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կոնդակ Երուսաղէմի Պատրիարքական Փոխանորդ Սմբատ վարդապետ Գազազեանի անունով, որով շնորհուեց նորան վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք, ըստ միջնորդութեան կրօնական ժողովի և Ամենապատիւ Պատրիարքի Հայոց Կ. Պոլսոյ։ 15 օգոստոսի թ. 783։

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Եսայի վարդապետի անունով, որով իրաւունք շնորհուեց կրել ծիրանագոյն